ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան 0010, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ,
Հեռ.՝ +37491700974, **Էլ. հասցե՝** foi@foi.am, www.foi.am

21.10.2024
352-99

Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Միքաելյան,

ԱՄՆ ՄԶԳ Ռազմավարական հաղորդակցության աջակցության ծրագրի շրջանակում Ինֆորմացիայի ազատության կենտրոնն իրականացնում է ՀՀ կառավարության հանրային հաղորդակցման առցանց հարթակների քարտեզագրում և դրանց արդյունավետության գնահատում:

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տվյալները:

1. Մարզպետարանի աշխատակազմի կողմից տնօրինվող/գործարկվող առցանց հարթակների ցանկը (պաշտոնական կայքեր, էլեկտրոնային հարթակներ, էլ. ծառայությունների համար նախատեսված հարթակներ): Խնդրում ենք տրամադրել այդ հարթակների պաշտոնական անվանումներն ու ակտիվ հղումները:
2. Ի լրումն, յուրաքանչյուր հարթակի վերաբերյալ խնդրում ենք նշել.
   2.1 ե՞րբ է գործարկվել հարթակը (նշել տարեթիվը և ամիսը),
   2.2 երբ է վերջին անգամ վերազինվել (դիզայնի թարմացում, նոր բաժինների ստեղծում) կայքը (նշել տարեթիվը և ամիսը),
   2.3 ո՞ր ստորաբաժանումը և ո՞ր պաշտոնյաներն են զբաղվում տվյալ հարթակ/ների բովանդակության ստեղծմամբ,
   2.4 ո՞ր ստորաբաժանման աշխատակից/ները կարող են ավելացնել կամ փոփոխել առցանց հարթակում ներկայացվող տվյալները:

3. Խնդրում ենք տրամադրել Facebook, X (Twitter), Telegram և YouTube սոցիալական ցանցերում Ձեր ղեկավարած պետական մարմնի պաշտոնական էջերի ցանկը (այդ թվում՝ ղեկավարի և մամուլի քարտուղարի անձնական էջերը)՝ ներառելով ակտիվ հղումները:

4. Ի լրումն, սոցիալական ցանցերում յուրաքանչյուր պաշտոնական էջի վերաբերյալ խնդրում ենք նշել.
   4.1 ո՞ր ստորաբաժանումը և ո՞ր պաշտոնյաներն են զբաղվում տվյալ սոցիալական ցանցի բովանդակության ստեղծմամբ,
   4.2 ո՞ր ստորաբաժանման աշխատակից/ները կարող են ավելացնել կամ փոփոխել էջում ներկայացվող տեղեկությունները,
   4.3 քանի՞ ադմինիստրատոր ունի էջը,
   4.4 արդյո՞ք Ձեր մարզպետը և/կամ մարզպետի տեղակալներն ընդգրկված են էջի ադմինիստրատորների ցանկում,

5. Արդյո՞ք Ձեր ղեկավարած կառույցը օգտվում է սոցիալական ցանցերում վճարովի գովազդի ծառայություններից՝ գովազդելով սոցիալական էջերը և բովանդակությունը։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում։

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան